«ՏԱՃԱՐ ՄԱՅՐԻ» ԿԱՂՆԵՏՈՒՆԿ ԱՆՏԱՌԱՊՈՒՐԱԿ

Գայիանէ Քոչարեան

Փաւստոս Բուզանդը հաղորդում է. «Եւ Հրաման տուեց Թագաւորն [Խոսրով Կոտակ Արշակունին (330-338) - Գ. Ք.] իր զօրավարին՝ աշխարհից բազմաթիւ մշակներ հաւաքել, անտառներից վայրի կաղին հանել ու բերել տնկել Այրարատեան գաւառում, սկսելով արքունի ամուր բերդից, որին ասում են Գառնի, մինչեւ Մեծամօրի դաշտը՝ այն բլուրը, որ կոչւում է Դուին եւ գտնւում է Արտաշատ մեծ քաղաքի հիւսիսային կողմում: Եւ այսպէս մերի տնկեցին գետի ընթացքով դէպի ներքեւ, մինչեւ Տիկնունի ապարանքը: Նա այս մերին կոչեց Տաճար մայրի: Մի ուրիշ մերի էլ տնկեցին նրանից դէպի հարաւ, եղէգնուտի եզերքով, եւ ամբողջ դաշտը լցրին կաղնի տնկով. սրա անունն էլ դրին Խոսրովակերտ: Նոյն տեղում շինեցին նաեւ արքունական ապարանքներ: Երկու մերիներն էլ պարիսպներով փակեցին, առանց իրար հետ կցելու, անցուդարձի ճանապարհի համար: (Մերին) աճեց ու բարձրացաւ: Յետոյ Թագաւորը հրամայեց ամէն տեսակ երէներ ու գազաններ ժողովել ու լցնել պարսպապատուած տեղերը, որպէսզի նրա Թագաւորութեան որսի՝ զբօսանքի եւ ուրախութեան տեղեր դառնան: Վաչէն [սպարապետ Վաչէ Մամիկոնեանը - Գ. Ք.] անմիջապէս կատարեց Թագաւորի ասածները»[1]:

Խոսրով Կոտակի անտառատնկման այս ձեռնարկն ինքնին բնապահպանական մեծ նշանակութիւն է ունեցել: Սա, փաստօրէն, բուսական եւ կենդանական աշխարհի վերարտադրութիւն էր, որն, աներկբայօրէն, նպաստել է շրջապատի միկրոկլիմայի բարելաւմանը, յատկապէս որ «այդ ժամանակ Հրատն ուղեկցում էր Արեգակին եւ անմաքուր ջերմ օդը գարշելի հոտ էր բուրում»[2] Երասխի ճահճուտներից:

Մերօրեայ հետազօտութիւնները Գեղամայ լեռնաշղթայի հարաւային լանջերի եւ հարաւ-արեւմտեան լեռնաճիւղերի վրայ, Ազատ եւ Խոսրով գետերի աւազանում (ներկայիս Խոսրովի արգելոցի տարածքում) բացայայտել են կղզեակաձեւ տարածուած, ռելիկտային (մնացորդային) անտառային զանգուածներ: Սրանք համարւում են կենտրոնական Հայաստանում երբեմնի լայն տարածուած կաղնուտների մնացորդներ[3]: Այսինքն՝ ստացւում է, որ 4-րդ դ. սկզբին Խոսրով Կոտակն անտառատունկը ձեռնարկել է այստեղ վաղուց ի վեր եղած խոշորառէջք կաղնուտների անտառային զանգուածների հիմքի վրայ, իրականացրել սրանց «վերակառուցմամբ»: Հակառակ դէպքում, Խոսրով արքայի գահակալութեան այս կարճ՝ 7-8-ամեայ ժամանակահատուածում գործնականօրէն հնարաւոր չէր «իւրացնել ամայի տարածութիւնները, ստեղծել անտառային կուլտուրաներ, որոնք լաւ խնամքի եւ մշակութեան դէպքում մի քանի տասնեակ տարիներ յետոյ միայն»[4] կարող էին վերածուել ցանկալի անտառապուրակների եւ դառնալ «թագաւորութեան որսի՝ զբօսանքի եւ ուրախութեան տեղեր»[5]:

Եթէ վերը նշուածը, գոնէ մասամբ, լուսաբանում է հարցի ե՛ւ գործնական կողմը, ե՛ւ արքայի յստակ հրամանի՝ այս

տեղերում կաղնետունկ անտառներ հիմնելու որոշակի պահանջը, ապա անտառներից մէկը Տաճար մայրի կոչելը յատուկ խորհելու տեղիք է տալիս՝ ինչո՞ւ Տաճար մայրի:

Տաճար մայրի տեղանուան առաջին բառը ՆՀԲ-ը մեկնում է՝ տուն եւ բնակարան Աստուծոյ, մեհեան կոոց, երկրորդը (ծառատեսակ լինելուց զատ) անտառի հոմանիշն է[6]: Իր հիմնած պարսպապատ կաղնետունկ անտառը Խոսրով Կոտակը՝ Տաճար մայրի այսինքն՝ Տաճար անտառ=Սրբազան անտառ=Սրբազան կաղնու անտառ=Կաղնու տաճար կոչելով, դրսեւորեց ժամանակի հասարակական գիտակցութեան մէջ դեռեւս իշխող հին ըմբռնումներ: Իրաւամբ, արքայի կողմից անտառը Տաճար մայրի կոչելն, ըստ էութեան, կաղնեպաշտութեան՝ բնապաշտական հնաւանդ աշխարհայեցողութեան ակնյայտ դրսեւորում է: Կաղնեպաշտութիւնն այնքան նուիրական է եղել մեր ժողովրդի համար, որ ըստ աւանդութեան՝ Հայոց դարձի ժամանակ Գանձակի շրջանի Խաչակապ գիւղի «կաղնու ծառեր պաշտող» բնակիչները հրաժարուել են ընդունել նոր դաւանանքը: Եւ քրիստոնեայ քարոզիչները ստիպուած իւրաքանչիւր կաղնու տակ կանգնեցրել են խաչ՝ նորովի սրբագործելով կաղնիները մէկ առ մէկ[7]: Կաղնեպաշտութեան յիշատակների արձագանգները Հայոց աշխարհում յարատեւել են մինչեւ մեր ժամանակները: Հայոց տարբեր գաւառներում յայտնի էին՝

– ճակատագիր տնօրինող, ցաւեր դարմանող, աղէտներ կանխող՝ «գերբնական», «զօրաւոր», «հրաշագործ» կաղնիներ.

– կաղնուտ պուրակ-ուխտատեղիներ, ուր այցելում էր տեղի բնակչութիւնը, յատկապէս՝ Վարդավառի տօներին՝ գալիք տարուայ առատ բերքի ակնկալիքով.– ցանկապատուած կաղնուտ-պուրակներ՝ որպէս սրբազան տարածք, ուր ճամփորդի թողած ցուպն անգամ տեւականօրէն անձեռնմխելի էր[8]: Հայկական լեռնաշխարհում կաղնեպաշտութեան ակնյայտ դրսեւորումներից է նաեւ կաղնի բաղադրիչով կազմուած մատուռ-ուխտատեղիների, գիւղերի, լեռնագագաթների տեղանունների (օրինակ՝ Կաղնուտ, Կաղնուձոր, Կաղնի խաչ, Կաղնուտթումբ...)[9] առկայութիւնը:

Կաղնին-կաղնուտը հին հնդեւրոպական աւանդոյթներում, ընդհանրապէս, ընկալուել է՝ որպէս երկնքի գերագոյն աստծոյ, ամպրոպային շանթառաքի սրբազան կացարան, որն ուղղակիօրէն առնչւում էր որոտ-շանթի, ջուր-անձրեւի, արգասաւորութեան-բեղմնաւորութեան-պտղաբերութեան հետ: Կաղնին՝ «Աստծոյ ընտրեալ - Աստծոյ պարգեւ - Աստուածածառ էր», որի առջեւ կատարւում էր արքայի պաշտօնամուտի արարողութիւնը: Կաղնու տերեւներով հիւսուած թագպսակ կրելով՝ արքան հաղորդակցւում էր գերագոյնի հետ, ստանում՝ ուժ, կորով, զօրութիւն, իմաստութիւն եւ արժանապատուութիւն, դառնում նրա երկրային մարմնաւորումը:

Հին հնդեւրոպական ցեղերի համար կաղնուտները բնական տաճարներ էին՝ սպասարկուող քրմերով, ծէս-արարողութիւններով, ամենամեայ տօնակատարութիւններով: Այստեղ «աստուածային պատգամներն ուղարկւում էին» կաղնիների ճիւղերի տատանումների եւ տերեւների սօսափիւնի միջոցով կամ էլ սրանց հովանու տակ քնածներին՝ մարգարէական երազներ առաքելու միջոցով արդէն ի վերուստ կանխորոշուած ապագայի խորհրդանշաններով, որոնք եւ մեկնում էին քրմերը: Ինչպէս հայցուորների համար Էպիրոսում էին մեկնում՝ Դոդոնի

© National Library of Armenia

դարաւոր բարձրակատար կաղնու տերեւների սօսափիւնով հաղորդուող Զեւսի «խորհուրդն անթիւր»: Կաղնուտներում իրականացնելով դատավարութեան արարողութիւնը՝ հին սլաւոնները հաւատացած էին, որ հինաւուրց կաղնիների հովանու տակ կայացուած բոլոր որոշումները բարբառում են աստծոյ ներշնչանքով: Նոյնքան սրբագործուած էին համարւում օրէնքներն արձակուած Գաղատիայի (Փոքր Ասիա) սենատի հաւաքատեղիում, որը կրում էր բնորոշ կելտական անուանում՝ «Դրիմեմետում» = «Սրբազան կաղնու անտառ» կամ «Կաղնու տաճար»[10] այսինքն՝ հայ. «Տաճար մայրի» անուան համարժէքը:

Ուրեմն, հնդեւրոպական համատեքստում՝ կաղնուտները պատգամախօսարաններ էին, որտեղ մարդիկ հաղորդակցւում էին աստուածներին, առաջնորդւում նրանց կամքով, արժանանում նրանց բարեգթութեանը: Այսինքն՝ Խոսրով Կոտակի «նորոգած» սրբազան կաղնուտները՝ նախկինում, ամենայն հաւանականութեամբ, պատգամախօսարաններ են եղել: Առաւել եւս, որ այս նոյն տեղերում՝ «Ոստան Հայոց» գաւառի սահմաններում էր գտնւում, Ագաթանգեղոսի յիշատակած, Հայոց դարձի նախօրէին դեռեւս գործող Երազամոյն տեղեր պատգամախօսարան-սրբավայրը՝ Տիր աստծոյ տաճարով[11]: Անսքող է, երազացոյց-երազահան՝ միջնորդ մարդկանց եւ աստուածների միջեւ, աստուածային պատգամաբեր, աւետաբեր, գուշակող, ճակատագիր տնօրինող, ապաքինող Տիր աստծոյ գործառոյթների առնչութիւնը «երկնային գուշակութիւնների աւետաբեր» (Վերգիլիուս) կաղնիների, կաղնուտ-պատգամախօսարանների հետ[12]: Հնարաւոր է, որ քննուող կաղնուտ-պատգամախօսարանները Տիր աստծուն ձօնուած այս սրբազան հողի՝ Երազամոյն տեղերի բաղադրիչ մասն են կազմել: Ի վերջոյ, տեղերի յոգնակիութիւնը, անտարակոյս, որոշակի տարածութեան վրայ սփռուած լինել է նշանակում (ընդ որում կաղնուտների այժմ փաստագրուած ռելիկտային զանգուածները սփռուած են կղզեակաձեւ), իսկ պատգամախօսարանի առկայութիւնը ենթադրում՝ յաճախ նաեւ սրբազան պուրակներ, պաշտուող ծառեր ...:

Սկզբնաղբիւրից յայտնի է, որ Փոքր Ասիայից մեր աշխարհ բերուած Արտեմիսի եւ Ապոլոնի պղնձաձոյլ, ոսկեզօծ արձանները կանգնեցուել են նախ՝ Արմաւիր-Սօսեաց անտառ, ապա՝ Բագարան-Ծննդոց անտառ պաշտամունքային համալիրներում[13]: Արտաշէս Առաջինը (Ք.ա. II դ.) Արտաշատում կառուցում է մեհեան «եւ Բագարանից այնտեղ փոխադրում Արտեմիսի արձանը եւ բոլոր հայրենական կուռքերը, բայց Ապոլոնի արձանը կանգնեցնում է քաղաքից դուրս հուպ ի ճանապարհն»[14]: Այս վկայութեանն անդրադարձողները բազմիցս նշել են, որ Ապոլոնի արձանը զատել են Արտեմիսի արձանից եւ կանգնեցրել նորակերտ մայրաքաղաքից դուրս՝ ճանապարհին, Ապոլոնի, յատկապէս՝ առեւտրի հովանաւորի գործառոյթն ընդգծելու նպատակով[15]: Սակայն ժամանակին բնորոշ կրօնական սինկրետիզմի խառնաշփոթութեան պարագայում անգամ, ուղղակի «հուպ ի ճանապարհն» դրուած օտար (նոյնիսկ՝ յունական) դիցարանի աստուածութեան արձանը պաշտամունքային արժէք ունենալ կամ պաշտամունքային հեղինակութիւն վայելել, հետեւաբար, որեւէ պաշտամունքային գործառոյթ կատարել տեղի բնակչութեան համար չէր կարող: Մինչդեռ սկզբնաղբիւրներից յայտնի է, որ օտար երկրներից բերուած, օտար դիցարանների արձանները համադրուել են հայրենի աստուածների հետ եւ տեղադրուել հայրենի հնաւանդ սրբավայրերում[16]: Իրաւամբ, զուգադրելով Ագաթանգեղոսի (նաեւ յունարէն բնագրերի ընդգրկումով) եւ Մովսէս Խորենացու վկայութիւնների տեղեկատւութիւնը՝ ստացւում է, որ յուն. Ապոլոնը նոյնացուել է հայ. Տիրի հետ (յուն. Ապոլոնի պատգամատունը=հայ. Երազացոյց-երազահան պաշտման Տրի դից)[17], հետեւաբար դրուել մայրաքաղաքից դուրս՝ «հուպ ի ճանապարհն», այսինքն՝ Տիրին ձօնուած Երազամոյն տեղեր պատգամախօսարան-սրբավայրում: Եւ քանի որ օտար աստուածները համադրուել են հայրենի աստուածների հետ, առանց խաթարելու նրանց առասպելաբանական ինքնութիւնը, ուստի Ապոլոնը նոյնացուել է երազացոյց-երազահան Տրի հետ՝ որպէս գուշակների հովանաւոր աստուածութիւն եւ որպէս այդպիսին, դրուել Երազամոյն տեղերում[18]: Այսինքն՝ ինչպիսին Ապոլոնը հռչակուած էր Յունաստանի եւ թէ Փոքր Ասիայի բազմաթիւ պատգամախօսարան-սրբավայրերում՝ արմաւենու, սոճու, հացենու, ձիթենու եւ դիցանուէր այլ անտառ-պուրակներով հանդերձ[19]: Ի դէմս Արմաւիրում կանգնեցուած Ապոլոնի արձանի՝ նոյնպէս ընդգծուել է գուշակների հովանաւոր աստուածութեան փոխառնչութիւնը Սօսեաց անտառ-պատգամախօսարանի հետ[20], որտեղ «տերեւների հանդարտ եւ սաստիկ շարժուելուց նայելով քամու ուժին եւ ուղղութեանը՝ մեր Հայոց աշխարհում սովոր էին գուշակութիւններ անել երկար ժամանակ»[21]: Ապոլոնի քննուող գործառոյթը, հաւանաբար, դրսեւորուել է նաեւ Բագարան-Ծննդոց անտառ պաշտամունքային համալիրում, որտեղ երազահան մոգի մասին յիշատակութիւնը վկայում է գործող պատգամախօսարանի մասին[22]: Եւ, ի վերջոյ, Երազամոյն տեղեր կաղնուտ-պատգամախօսարանում Ապոլոն=Տիրը թէ՛ երազներ էր ուղարկում իր քնած հայցուորներին եւ թէ՛ ձիրք ու ներշնչանք պարգեւում քրմերին՝ մեկնելու դրանք: Ի լրումն նշենք, որ պատգամախօս Ապոլոնի փոխառնչութիւնը կաղնուտների պաշտամունքի հետ, նաեւ առանց միջնորդութեան՝ անմիջական էր, քանզի յայտնի էր Ապոլոնն իր Դրիմաս=Կաղնու եւ Իքսիոս=Ճագոմի մականուններով[23]:

Այսպիսով, Խոսրով Կոտակն իր կաղնետունկ պարսպապատ անտառները հիմնեց՝ նախկին կաղնուտ-պատգամախօսարաններն ընդգրկելով: Եւ քանի որ Հայոց դարձից անցել էր ընդամէնը երեք տասնամեակ, ապա «նորոգուած» եւ ընդարձակուած անտառներից մէկը Տաճար մայրի=Կաղնու տաճար կոչելը տեղի նուիրական կաղնուտների պաշտամունքի, տակաւին, չմոռացուած յիշատակների բացայայտ արձագանգ էր: Իրաւամբ, նոր կաղնիներ՝ պաշտուող ծառեր բերելու, Տաճար մայրի կոչելու իրողութիւնն ինքնին յուշում է, որ աշխարհընկալման վրայ դեռեւս իշխում են հին աստուածները: «Մէկ դար եւ մի փոքր աւելի պաշտամունքային լեզուն օտար էր, եւ Քրիստոսի վարդապետութիւնը մնում էր անհաղորդ»[24]: Քանզի, Փաւստոս Բուզանդի վկայութեամբ, «քչերը, որոնք փոքր ի շատէ ծանօթ էին յունական կամ ասորի գրագիտութեան, մասամբ հասկանում էին այդ [նոր կրօնը՝ քրիստոնէութիւնը - Գ. Ք.]», մինչդեռ շատերը «իրենց ժամանակը մաշում էին ... հին հեթանոսական սովորութիւններով... նրանք սիրում էին իրենց առասպելների երգերը, վիպասանութիւնները, նրանցով կրթւում էին, նրանց հաւատում էին, նրանց մէջ յարատեւում»[25]: Խոսրով Կոտակը եւ իր շրջապատը ժամանակի աշխարհընկալման կրողներն էին՝ այդ

© National Library of Armenia

մտայնութեան ոլորտում ձեւաւորուած անհատականութիւններ:

Այսուհանդերձ, Մովսէս Խորենացին, որ գովաբանում է հայ հեթանոս արքաների նմանօրինակ գործունէութիւնը, շռայլ է եւ պերճախօս՝ Երուանդ Վերջինի՝ Երուանդակերտ-Ծննդոց անտառի կամ (Վաղարշակ=) Արտաշէս Ա-ի՝ Տայքի Կող գաւառում կերտած անտառապուրակների յիրաւի արքայավայել իր նկարագրութիւններում[26], անթաքոյց հեգնանքով է խօսում Խոսրով Կոտակի անտառատնկման այս ծաւալուն ձեռնարկի մասին: Ըստ Մովսէս Խորենացու՝ Խոսրով Կոտակն, «անփոյթ լինելով քաջութեան եւ բարի յիշատակների, զբաղուած էր զբօսանքներով, թռչնորսութեամբ եւ այլ որսերով, որի համար էլ նա անտառ տնկեց Ազատ գետի մօտ, որ մինչեւ այսօր էլ կոչւում է նրա անունով»[27]: Պատմահայրը, ձեռքի տակ ունենալով անտառատնկման մասին Փաւստոս Բուզանդի վկայութիւնը, հարկ չի համարել մանրամասնել իր հաղորդումն, անգամ յիշատակութեան արժանացնել Ազատ գետի երկայնքով տնկուած անտառի, արքայի դրոշմած եւ պատմիչի վաւերացրած բուն՝ Տաճար մայրի անունը: Քանզի փոխուել էին ժամանակները, նոր դաւանանքի գաղափարախօսութիւնն աստիճանաբար ներթափանցելով «ազգային հոգեբանութեան մէջ եւ ազգային ըմբռնումներում» հաստատում էր «նոր ազգային-քրիստոնէական մշակոյթի հիմքերը»[28]: Եւ արդէն Ե. դարում, Մովսէս Խորենացու նման համոզուած եւ ճշմարիտ քրիստոնեայի համար (որ հայոց դիցարանը ներկայացնում է, գրեթէ միայն յունական համարժէքներով, իսկ հայոց հին աստուածներին՝ պատմականացուած նախնիներ), քրիստոնեայ արքայի՝ նման վարքագիծն անհանդուրժելի է: Արդարեւ, «Ոսկէ դարի» եւ ոչ մի պատմագիր, բացի Փաւստոս Բուզանդից, այլեւս չյիշատակեց Տաճար մայրի տեղանունը: Ղազար Փարպեցին, Ե. դարավերջի քաղաքական դէպքերի կապակցութեամբ, նոյն կաղնետունկ անտառը յիշատակելիս պարզապէս անուանում է Խոսրովակերտ[29]: Այսինքն՝ վաղ քրիստոնէական հայ գրաւոր աւանդութիւնը մէկընդմիշտ մոռացութեան մատնեց Տաճար մայրի տեղանունը՝ յիրաւի, որպէս հեթանոսական ժառանգութեան բացայայտ դրսեւորում, եւ երկու անտառն էլ յորջորջեց մէկ ընդհանուր՝ Խոսրովակերտ անունով:

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

1 **Փաւստոս Բուզանդ**, *Հայոց պատմութիւն (այսուհետեւ՝ Բուզանդ)*, Երեւան, 1987, III, Ը: Կաղնետունկ անտառապուրակի «Խոսրովակերտ» հատուածին կ'անդրադառնանք առանձին յօդուածով:

2 **Մովսէս Խորենացի**, *Հայոց պատմութիւն (այսուհետեւ՝ Խորենացի)*, Երեւան, 1990, III, Ը:

3 Սրանք, գտնուելով Առաջաւոր Ասիայի հարաւային չորային կլիմայի եւ ֆլորայի ազդեցութեան ոլորտում, ծագումով առնչւում են Հիւսիսային Իրանի Ղարադաղի եւ Զագրոս լեռների անտառային զանգուածների հետ, օգնում բացայայտել Հայաստանում կաղնուտների ծագման առանձնայատկութիւնները, յատկապէս՝ երկրաբանական ուշ ժամանակաշրջաններում (տե՛ս՝ **Յ. Մուլքիջանեան**, *Հայկական ՍՍՀ արգելանոցները եւ արգելավայրերը*, Երեւան, 1975. **Մ. Գ. Գրիգորեան**, *Խոսրովի արգելոցի բուսական ծածկոյթը*, «Հայաստանի բնութիւն», 1976, թիւ 1/35/, էջ 21-24):

4 **Լ. Վ. Յարութիւնեան**, *Անտառապուրակներ եւ կանաչ պուրակներ*, Երեւան, 1974, էջ 34:

5 Բուզանդ, III, Ը:

6 *Նոր բառգիրք Հայկազեան լեզուի*, հտ. II, Երեւան, 1981, էջ 202, 841:

7 Ա. Ղանալանեան, *Աւանդապատում*, Երեւան, 1969, էջ 174-175, թիւ 456:

8 Արցախի Վարանդայ գաւառում Նոր-Շէն գիւղի Սաղունց կաղնու տերեւներով գուշակում էին. Քերթի գիւղի չորս մեծ կաղնիների բնի հողը քսում էին երեսին, որ մկնատամը բուժուի եւ զոհ էին մատուցում. Հղորդի գիւղի մեծ կաղնին, «Մոշ աղբիւրի» մօտ, բուժիչ սրբատեղի էր. Դոնավազ գիւղի կաղնուն զոհ էին մատուցում,

երբ մորեխ էր գալիս. Հարմւ գիւղի կայծակնահար կաղնին «զօրաւոր» էր: Բոռչալուի գաւառում. Դսեղի ծմակի բուժիչ կաղնին սուրբ էր համարւում եւ կոչւում էր «Զօրաւոր ծառ». Օձունի կաղնու ծառերը «ամենայն հիւանդութեան բուժիչ» էին. այստեղ ուխտի էին գալիս: Երբ Իջեւանի Ներքին-Աղդան գիւղի ջահելները պատերազմ էին գնում, ծերերը խորհուրդ էին տալիս՝ «ձեռքներդ քսէք Վարդանի տնկած կաղնուն՝ ձեզ մահ ու մեռ չկայ»: Ս. Վարդանանց տօնին, Կուտկաշէնի Նիժ գիւղի կաղնուտ–սրբատեղի աքաղաղ էին նուէր բերում, սակայն «ձեռ չէին դիպցնում կաղնի ծառերի տակ թափուած ճղներին»՝ դրանք սուրբ համարելով: Իրանի Ղարադաղ գաւառի Աղալի Բալա գիւղի դարաւոր կաղնիների պուրակ, աշնանացանից յետոյ, ուխտի էին գալիս եւ խնդրում «առատութիւն՝ գալիք տարուայ բերքի համար». Քէլվան գաւառակի, Փիրիկոր գիւղի հինաւուրց կաղնիների պուրակ՝ բնակչութիւնը ուխտի էր գալիս տարուայ տարբեր ամիսներին, եւ, յատկապէս, Վարդավառի տօներին: Ներկայացուած ազգագրական տուեալները մանրամասն տես՝ Ազգագրական հանդէս, հտ. Բ., Թիֆլիս, 1897, էջ 190-203. Ազգագրական հանդէս, հտ. X, Թիֆլիս, 1903, էջ 186, **Ա. Ղանալանեան**, *Նշ. աշխ.*, էջ 388, թիւ 840, **Հ. Խառատեան**, *Եղիշէ առաքեալը եւ նրա առաքելութիւնը*, «Հայոց սրբերը եւ սրբավայրերը», Երեւան, 2001, էջ 49-60, **Ա. Աւագեան**, *Իրանի Ղարադաղ գաւառի հայերի ուխտավայրերը*, «Հայոց սրբերը...», էջ 281-288:

9 **Թ. Խ. Յակոբեան, Ստ. Տ. Մելիք եւ Բախշեան, Յ. Խ. Բարսեղեան**, *Հայաստանի եւ յարակից շրջանների տեղանունների բառարան*, հտ. 2, Երեւան, 1988, էջ 911:

10 Կաղնին-կաղնուտը հին հնդեւրոպական աւանդոյթներում ներկայացուած է ըստ՝ Հոմերոս, Ոդիսական. թարգմ. Հ. Համբարձումեանը, Երեւան, 1988, XIX, 296-299, **Pliny**, *Natural History* (այսուհետեւ՝ NH), vol. IV, London, 1960, XVI. III, 7-11, IV, 9, 10, LXXXVII. 237, LXXXIX, 239, XCV, 249-251, **Дж. Дж. Фрэзер**, *Золотая ветвь*, М., 1986, с. 156-159, **А. Н. Афанасьев**, *Древо жизни, избранные статьи*, М., 1982, с. 216-217, **А. И. Немировский**, *Этруски.* От мифа к истории, М., 1983, с. 113.

11 **Ագաթանգեղոս**, *Հայոց պատմութիւն (այսուհետեւ՝ Ագաթանգեղոս)*, Երեւան, 1983, Ճ 778. Ճ 779, **Հ. Ս. Էփրիկեան**, *Պատկերազարդ բնաշխարհիկ բառարան*, հտ. I, Վենետիկ, 1903-1905, էջ 687: **Գ. Քոչարեան**, *Դուին ամրոց-սրբավայրը Հայոց դարձի նախօրէին*, «Հայոց սրբերը...», էջ 289-296:

12 Ցաւելենք, որ Տիր աստուածութեան դիցաբանական կերպարի հնագոյն հնդեւրոպական արմատները որոնելիս բացայայտուել է վաղնջական աշխարհահայեցողութեանն առնչուող նաեւ նրա բուսական անցեալը – տիր դնել՝ վաղագոյն շարացան համակարգ. տիր՝ մեծահատ. կարմրահատ ցորեն. տիրիփ՝ ուռենու բարակ ճիւղ. որով կապում են խաղողի որթի մատները. տիրիթ՝ դռան սունկ. թիր-տիր՝ տանիքի գերան (մանրամասն տես՝ **Գ. Քոչարեան**, *Դուին ամրոց-սրբավայրը Հայոց դարձի նախօրէին*, «Հայոց սրբերը...», նոյնի, Տիր/Տիւր աստուածութիւնը «Հայոց մեծաց» սերնդաշարքում,- Լրաբեր հասարակական գիտութիւնների, 2004, թիւ 3):

13 **Խորենացի**, II, ԺԲ, Խ:

14 *Նոյն տեղում*, II, ԽԹ:

15 **Ф. И. Тер-Мартиросов**, *Фляги как торговая тара*, "Проблемы античной истории и культуры", т. II, Ереван, 1979, с. 144, **Ֆ. Տէր-Մարտիրոսովի** հետ համակարծիք են՝ **Ժ. Խաչատրեան**, Իրանա-հայկական աղերսների հարցի շուրջ,- Լրաբեր հասարակական գիտութիւնների, 1981, թիւ 2, էջ 58, **Г. Тирацян**, *Вопросы преемственности официального культа в античной Армении*, "Вестник общественных наук", 1985, 10, с. 62.

16 Հեթանոս Հայաստանի ութ մեհեանները Ագաթանգեղոսի եւ Մ. Խորենացւոյ համեմատ. Քննադատական ուսումնասիրութիւն Ա. Կարիէրի, թարգմանեց Հ. Յակովբոս վ. Տաշեան, Վիեննա, 1899:

17 Ագաթանգեղոս, Ճ 778, Agathangelus und die Akten Gregors von Armenien, Gottingen, 1887, S. 65, 22, Ագաթանգեղոսի Պատմութեան յունական նորայայտ խմբագրութիւնը (Վարք),- «Էջմիածին», 1966, Թ-Ժ, էջ 103, Խորենացի, II, ԽԹ:

18 Տիր-Ապոլոն եւ այլ համադրութիւններ քննարկելիս՝ մենք ընդգծել ենք՝ Ապոլոնի, յատկապէս, դռների, դարպասների, ճանապարհների պահապան-հովանաւորի գործառոյթը (այս մասին տե՛ս **Գ. Քոչարեան**, *Դուին ամրոց-սրբավայրը Հայոց դարձի նախօրէին*, «Հայոց սրբերը...», էջ 295, նոյնի, *Դուինը վաղ Արշակունեաց շրջանում*,- ՊԲՀ, 2003, թիւ 3, էջ 206-214):

19 **Страбон**, *География в 17 книгах*, М., 1964, VII, VII, 6; XIV, I, 5, 35; XVI, II, 6, Павсаний, Описание Эллады или путешествие по Греции во II-м веке по р. г., СПБ., 1887-1889, I, 21, 7; IV, 33, 4; VII,5,11; VII, 21,11-13; IX, 24,4; X, 33,11.

20 **Г. Тирацян**, *Вопросы преемственностиё*, с. 58, 61.

21 Խորենացի, I, Ի;

22 Նոյն տեղում, II, ԽԸ:

23 А. Ф. Лосев, Античная мифология в ее историческом развитии, М., 1957, с. 273. Мифы народов мира, Энциклопедия, т. II, М., 1982, с. 254. Հնդեւրոպական աւանդոյթներում ամենասրբազանը կաղնին էր եւ նրա վրա աճող

© National Library of Armenia

ճագոմը. վերջինիս խորհրդապաշտական նշանակութեան մասին տե՛ս NH. XVI. XCV. 249-251. նաեւ՝ **Дж. Дж. Фрэзер**. *Золотая ветвь*. с. 615-623.

24 **Ա. Մարտիրոսեան**. *Քրիստոնէութիւնը եւ ազգային ինքնութիւնը*.- «Աշտանակ», /հայագիտական պարբերագիրք/. հտ. Ա, Երեւան, 1995, էջ 5-13:

25 Բուզանդ, III, ԺԳ:

26 **Խորենացի**, II, Զ, ԽԱ, ԽԲ, տե՛ս նաեւ՝ **Գ. Քոչարեան**, «*Արքունի ծառազարդ ապարանքը*» *Երուանդակերտից առաջ եւ յետոյ*,- Գիտական աշխատութիւններ. հ. II. Գիւմրի. 1999. էջ 120-126, նոյնի, Արտաշէս Ա Բարին որպէս հզօր պետականութիւն կերտող.- Գիտական աշխատութիւններ. հտ. III. Գիւմրի. 2000. էջ 26:

27 **Խորենացի**, III, Ը:

28 Արտայայտութիւններն ըստ՝ Ա. Մարտիրոսեան, նշ. աշխ.:

29 **Ղ. Փարպեցի**. *Հայոց պատմութիւն*, Երեւան, 1982, էջ 350-351:

ՐԱՖՖՈՒ «ԽԵՆԹԸ» 125 ՏԱՐԵԿԱՆ Է

Խաչիկ Սամուէլեան

1880 թուականի յունիսի 4-ին Թիֆլիսի «Մշակ» լրագրի 92-րդ համարում աւարտւում է Րաֆֆու «Խենթը» վերնագրով վէպի տպագրութիւնը:

Որոշ ժամանակ անց, Շուշիում, Րաֆֆու աշակերտ Աբէլ Ապրեսեանի հոգացողութեամբ, «Խենթը» տպագրւում է նաեւ առանձին գրքով:

2005 թուականի յունիսի 4-ին, Րաֆֆու «Խենթը» վէպը դառնում է 125 տարեկան:

Այս վէպը մեծ ու ծանրակշիռ արժէք ունի գրող Րաֆֆու ստեղծագործական կեանքում: Աչքի ընկնող տեղ է գրաւում նաեւ հայ վիպագրութեան պատմութեան մէջ: «Խենթը» արժանացել է մեծ ուշադրութեան եւ բարձր գնահատականի հայ գրաքննադատութեան կողմից: Գրուել եւ տպագրուել են բազմաթիւ հետազօտութիւններ եւ ուսումնասիրութիւններ այս ստեղծագործութեան մասին: Շարքային ընթերցողների կողմից, պարբերական մամուլի միջոցով, «Խենթը» արժանացել է մեծաքանակ դրուատանքների:

Տարիների ընթացքում Րաֆֆու այս վէպը տասնչորս անգամ հրատարակուել է հայերէն: Եօթ անգամ լոյս է տեսել ռուսերէն եւ երկու անգամ վրացերէն: Թարգմանուել ու տպագրուել է անգլերէն, գերմաներէն, իսպաներէն, չեխերէն, ռումիներէն, թուրքերէն, մոլդաւերէն, վեց անգամ վեր է ածուել պիեսի: Տարբեր թուականների ընթացքում երեսունհինգ անգամ ներկայացուել է այլեւայլ բեմերում:

«Խենթի գրութիւնը ունի ծաւալուն եւ բազմաբնոյթ դրուագներով հարուստ պատմութիւն: Յայտնի է, որ 1877 թուականի օգոստոսի վերջերին Րաֆֆին իբրեւ մանկավարժ հրաւիրւում է Ագուլիս, երկսեռ դպրոցում վարելու հայոց լեզուի եւ պատմութեան դասատուի պաշտօնը: Նա միաժամանակ «Փորձ» ամսագրի խմբագիր Աբգար Յովհաննիսեանից յանձնարարութիւն է ստանում «հետազօտել հայոց գաղթականների վիճակը, որոնք Ռուս-թրքական պատերազմի պատճառով Դիարից նահանջող Տէր-Ղուկասովի զօրքերի հետ անցել էին Ռուսահայաստան եւ ապրուստ էին որոնում Երեւանեան նահանգի գաւառներում»:


Ր Ա Ֆ Ֆ Ի

Խ Ե Ն Թ Ը

Արկածներ վերջին Ռուս-թրքական պատերազմից

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԵՑ ԱԲԷԼ ԴԱՒԹԵԱՆ ԱՊՐԵՍԵԱՆՑ

Շ Ո Ւ Շ Ի

Ի ՏՊԱՐԱՆԻ ՄԻՐՋԱՅԱՆԻ ՄԱՀՏԵՍԻ-ՅԱՒՈՐԵԱՆՑ

1881

© National Library of Armenia